

ներու, բազմոցներու եւ ծածկոցներու դէպ մը կար»։ Այդ գիշեր հոն կը պառկին «Թոնիրին չորս կողմը սփռուած զորքերու վրայ»։ Դարձեալ Շաղատ գիւղին մէջ իրենց հանգիստին համար գետինը զորքեր կը սփռուին։ Կը վկայեն որ քիւրսիի համար հին զորդ մը կը գործածեն⁽¹²²⁾։

Ուրիշ Անգլիացի մը՝ Captain Richard Wilbrahm, 1837ին Կարսի շրջանի ախոռանման հայ տունները նկարագրած ատեն կ'ըսէ որ տան մէկ անկիւնը յատկացուած է տանտիրոջ եւ իր ընտանիքին բնակութեան համար, եւ այդ իսկ պատճառաւ միւս մասերէն բաժնուած ոտք մը բարձր դախտով, որուն վրայ երբեմն «կեղտոտ զորդի կտոր մը փռուած է»⁽¹²³⁾։ 1838ի Մարտ 26ին, Charles Fellows Կուտինա (Քէօթա-հիա) այցելութեան՝ հայ մեծատան մը տունը կը հիւրասիրուի։ Տան ներքին մասը «գետինը ամբողջութեամբ ծածկուած է թուրքի մեծ զորքերով եւ պարսկական զորքերով, որոնք սենեակներուն տուած էին թէ՛ հանգստութեան եւ թէ՛ հարստութեան երեւոյթ մը»⁽¹²⁴⁾։ Այս մասին ընկերացած տան մը զորքերով զարդարուած ներքնամասի նըկարը հաւանօրէն Կուտինահայ մեծատան հիւրասենեակին իսկ կը ներկայացնէ։ Այս նոյն ատենները Ամերիկացի Horatio Southgate Պիթլիսի մէջ հայ հարուստ վաճառականի մը տունը կը հիւրասիրուի, ուր «զորքեր եւ բազմոցներ սփռուեցան իրենց համար»⁽¹²⁵⁾։ 1855ին Անգլիացի Charles Duncan Տրապիզոնի շրջանի գեղջկական տուններու մասին կը գրէ․ «բնակութեան համար զործածելի սենեակին մէջ մաս մը բարձրացուած է կոշտ օթոցներով, որոնց վրայ հանգստանալու համար զորդ սփռուած է»⁽¹²⁶⁾։ Նոյն թուականին Անգլիացի Humphry Sandwith Կարնոյ հայ տուններուն ներքնակողմը նկարագրած ատեն կը վկայէ, որ «բնիկ սենեակ մը քիչ կարասի ունի, դախտ մը եւ զորդ մը, ճիշտն ըսելով, կը կազմեն ամբողջութիւնը»⁽¹²⁷⁾։ Դարձեալ ուրիշ Անգլիացի մը, John Usshur Տիարպէթիւրի մէջ հայ կաթողիկ վաճառականի մը տունը կը հիւրասիրուի 1865էն քիչ առաջ։ Հայ վաճառականը, Սոճա Պէտուլէն, կը տեղաւորուի «ընդարձակ սենեակի մը մէջ, կահաւորուած բազմոցներով եւ զորքերով»⁽¹²⁸⁾։ 1876ին Անգլիացի Captain Fred Burnaby Անկիւրիա կ'այցելէ եւ կը վկայէ որ հայ տունը կահաւորուած էր «թաւ զորքերով, ըստ սովորութեան»⁽¹²⁹⁾։

Baron Von Haxthausen 1844ին նշանաւոր Սահակ Աղամալեանէ կը

⁽¹²²⁾ Missionary Researches in Armenia. — London, 1834, pp. 224, 240, 242, 251, 252.

⁽¹²³⁾ Travels in the Trans-Caucasian Provinces of Russia. — London, 1839, p. 292.

⁽¹²⁴⁾ A Journal Written During an Excursion in Asia Minor. — London, 1839, p. 150.

⁽¹²⁵⁾ Narrative of a Tour Through Armenia, Kurdistan, Persia and Mesopotamia. — New York, 1840, Vol. I. p. 219.

⁽¹²⁶⁾ A Campaign with the Turks in Asia. — London, 1855, Vol. I, p. 41.

⁽¹²⁷⁾ A Narrative of the Siege of Kars. — London, 1856, p. 67.

⁽¹²⁸⁾ London to Persepolis. — London, 1865, p. 363.

⁽¹²⁹⁾ On Horse-oak through Asia Minor. — London, 1877, Vol. I. p. 148.